

# Սեղաններ

Ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադային մասնակից երկրների քանակը մոտենում է հարյուրի: Ընդհանուր մասնակիցների քանակը կարող է լինել մինչև 600 մարդ: Կազմակերպիչները պետք է այդքան մարդկանց համար էքսկուրսիաներ կազմակերպեն, ապահովեն հյուրանոցներով, լուծեն սննդի հետ կապված խնդիրները:

Սնունդի ժամանակ հերթեր և հրմշտոց քիչ է լինում, եթե յուրաքանչյուրն իմանում է իր տեղը: Դրա համար պետք է նախօրոք անել սեղանների բաշխումը և հենց առաջին օրը յուրաքանչյուր պատվիրակության ցույց տալ իրենց տեղը: Յուրաքանչյուր երկրից ժամանել են առավելագույնը 6 անձ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ կարող է նստել 6 մարդ: Յուրաքանչյուր պատվիրակությունն ցանկանում է նստել մի սեղանի շուրջ: Միևնույն սեղանի շուրջ կարող են նստել մեկից ավել երկրների պատվիրակություններ (եթե նրանք մեծ չեն):

Պահանջվում է գրել ծրագիր, որը հաշվի, թե առնվազն քանի սեղան է պետք բոլորին միաժամանակ սնունդով ապահովելու համար:

## Մուտքը

Առաջին տողում տրված է պատվիրակությունների  $n$  ( $1 \leq n \leq 100$ ) քանակը: Հաջորդ տողում տրված են 1-ից 6 տիրույթին պատկանող  $n$  ամբողջ թվեր:

## Ելքը

Պետք է արտածել մի թիվ՝ մինիմալ սեղանների քանակը:

## Օրինակ

**Մուտքը.**

5  
1 3 5 2 6

**Ելքը.**

3